ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ
ՄՄ

ՈՍԿՅԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՒ ԺԷ. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ

Հայ տպագիր գրքի պատմության մեջ իր բացառիկ տեղն ունի Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամում գործած հայկական տպագրատունը[1], որտեղ ազգանվեր գործունեություն են ծավալել անձնազոհ ու խանդավառ անհատներ՝ իրենց ուրույն դերն ունենալով հայ տպագրության պատմության մեջ: Նրանց շարքում իր անձնվեր գործունեությամբ առանձնանում է Ոսկան Երեւանցին: Նա կարողացավ ոչ միայն հիմնել տպարան երեք քաղաքներում (Լիվոռնո, Ամստերդամ, Մարսել), այլեւ ավարտին հասցնել դարավոր մի ծրագիր՝ Աստվածաշնչի տպագրությունը:

Շքեղ զարդանախշերով, բազմաթիվ մեծ եւ փոքր պատկերների առկայությամբ առաջին հայ տպագիր Աստվածաշունչը լույս է տեսել 1666-1668 թթ.: Այն յուրահատուկ է նախ եւ առաջ օգտագործված պատկերների հարստությամբ, որոնց քանակը Հին Կտակարանում 51-ն է, իսկ Նոր Կտակարանում՝ 107-ը:

Ընդհանրապես Ոսկան Երեւանցու հրատարակություններն աչքի են ընկնում իրենց շքեղ պատկերազարդմամբ: Նշենք, որ գրքերի ձեւավորման համար կարեւոր նշանակություն են ունեցել նաեւ արեւմտաեվրոպական տպագիր գրքի ձեւավորման ավանդույթները, որոնք մինչեւ ԺԷ. դարը զարգացման բավական հարուստ ճանապարհ էին անցել: Նկարազարդման բաղկացուցիչ մասն են կազմել թեմատիկ փորագիր պատկերները, որոնց պատկերագրական առանձնահատկությունները եւ աղերսները ԺԷ. դարի հայ ձեռագիր աստվածաշնչերի հետ սույն հոդվածի խնդրո առարկաներն

[1] Ամստերդամի հայկական տպարանի պատմության մեջ նշանակալի դեր են խաղացել Ոսկանյան եւ Վանանդեցիների տպարանները, որոնց հիմնադիրները՝ Ոսկան Երեւանցին եւ Թովմա Վանանդեցին հայ տպագրության պատմության ամենանշանավոր դեմքերից են:

են: Հաշվի առնելով այն, որ գրքագիտության ընդգավառում մինչ օրս կատարված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են միայն գրքերի դասակարգմանն ու համապատասխան մատենագիտությունների կազմմանը, եւ երբեւէ փորձ չի արվել առանձին ուսումնասիրության ենթարկել փորագրանկարները, ուստի ներկա համառոտ քննությունը նպատակ ունի լուսաբանելու նաեւ նշյալ հարցադրումները:

Հայկական տպագիր գրքի նկարազարդումները, սկսած առաջին հրատարակություններից, կատարվում էին հայկական մանրանկարչական արվեստի սկզբունքների նմանողությամբ (խորաններ, ճակատազարդեր, գլխազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր), իսկ թեմատիկ նկարների պատկերագրությունը ավելի շատ հիշեցնում էր ժամանակի արեւմտաեվրոպական փորագրապատկերային արվեստը: Այս միտումը պայմանավորված էր նրանով, որ հայ տպագրության սկզբնավորումից մինչեւ ԺԸ. դար հայկական գրքերի փորագրապատկերները կատարվում էին միայն եվրոպացի վարպետների ձեռքով: Ոսկան Երեւանցու հրատարակած գրքերում, այդ թվում նաեւ Աստվածաշնչում, հիմնականում տեղ են գտել ծագումով հոլանդացի Քրիստոֆել վան Զիխեմի պատրաստած փորագրանկարները: Երեւանցու հրատարակությունների փորագրանկարները կամ նրանց մեծ մասը ձեռք է բերել Մատթեոս Ծարեցին, քանի որ այդ պատկերները կան նրա հրատարակած՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքում եւ «Շարակնոցում»[2]: Ոսկանյան Աստվածաշնչի փորագրանկարների մեծ մասը՝ 100 պատկեր, օգտագործվել են նաեւ «Յիսուս Որդի» գրքում: Ընդ որում, դրանց մեծ մասը աստվածաշնչյան թեմաներով պատկերներ են, ինչը եւս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Ամստերդամի հայկական տպարանի հիմնումը եւ փորագրապատկերների ընտրությունը ի սկզբանէ նպատակաուղղված է եղել հայատառ Աստվածաշնչի տպագրությանը:

Մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Զիխեմը թողել է նրանց նկարներից պատճենած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հեն(դ)րիկ Գոլցիուս՝միաժամանակ դնելով իր ստորագրությունը՝ CVS[3]: Ք. վ. Զիխեմի կատարած փորագրանկարներն արված են փայտի երկայնակի փորագրության կամ քսիլոգրաֆիայի եղա-

---

[2] **Ս. Ե. Քոլանջյան**, Հեթում Բ.-ի Զեռագիր Աստուածաշունչը եւ Ոսկանյան հրատարակությունը, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 152:

[3] Էքսլիբրիս («Ի գրեանց»)՝ գրքային նշան (լատ. ex libris գրքից), որի վրա սովորաբար արտահայտվում են հեղինակի անվան եւ ազգանվան սկզբնատառերը: Էքսլիբրիսի հայրենիքը համարվում է Գերմանիան, որտեղ այն ի հայտ է եկել տպագրության գյուտից

նակով (հունարեն՝ xylon-փայտ եւ grapho-գրում եմ, նկարում եմ, բառերից)[4]: Նա, լինելով հմուտ փորագրիչ, կարողացել է վարպետորեն եւ մաքուր փորագրել իր ժամանակի նշանավոր նկարիչների աշխատանքները[5]: Վերջինիս փորագրանկարների արդեն պատրաստի տպաձեւերը Ոսկան Երեւանցին օգտագործել է իր հրատարակություններում՝ հարմարեցնելով դրանք գրքերի բովանդակությանը, սակայն փորագրանկարների մեծ մասն օգտագործվել է առանց փոփոխության, ինչի արդյունքում ավետարանիչների անունները լատիներեն են գրված: Ինչպես նշում է Հ. Քյուրտյանը, հոլանդացի փորագրանկարիչը լատիներենով՝ A, B, C, D եւ այսպես շարունակ, հաջորդաբար համարակալել է պատկերները եւ գրքի վերջում, ըստ համարների հերթականության, դրել նրանց մակագրությունները: Քանի որ գրքի վերջում հայերենը նման մակագրություններ չունի, ուստի տառերն անիմաստ են դառնում: Զենք բացառում այն փաստը, որ Ք. վան Զիխեմը ծանոթ է եղել նաեւ ֆրանկ-ֆլամանդացի փորագրիչ, ոսկերիչ Թեոդոր դե Բրայի (1561-1623 թթ.)՝ լատիներեն Աստվածաշնչի փորագրապատկերներին: Այդ Աստվածաշունչը հրատարակվել է 1609 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում: Այս ամենից ելնելով՝ կարող ենք ասել, որ հայ տպագիր գրքերի նկարազարդման արվեստը ձեւավորվել է ժամանակի գեղանկարչական բարձր վարպետությամբ ստեղծված հիմքերի վրա, իսկ Ոսկան Երեւանցու Աստվածաշունչը դարձել է եվրոպական գեղանկարչության ազդեցությունները տարածող հիմնական աղբյուրը: Այն գեղարվեստական մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն հայ տպագիր գրքի ձեւավորման, այլ նաեւ ուշ շրջանի հայ միջնադարյան մանրանկարչության՝ հատկապես աստվածաշնչերի պատկերազարդման վրա: Ոսկանյան Աստվածաշունչը նոր որակ եւ կարեւոր խթան դարձավ ԺԷ.-ԺԸ. դդ. հայ գրքարվեստի մեջ՝ գեղարվեստական նոր ձեւերի մշակման, ձեւավորման եւ զարգացման համար:

Եվրոպական մանրանկարչության ոճով հայկական Աստվածաշնչերի նկարազարդումը սկսվել է ԺԷ. դարի առաջին քառորդում: Մեզ են հասել մի շարք Աստվածաշնչեր եւ Ավետարաններ, որոնց մանրանկարների համար նախատիպեր են եղել եվրոպական պատկերները: Այդ շար-

---

հետո: Ա. Դյուրերը համարվում է առաջին նկարիչը, որը ստեղծեց իր էքսլիբրիսը (1523 թ.)՝ իր անվան եւ ազգանվան սկզբնատառերով:

[4] **Յ. Քիւրտեան**, Փայտափորագրչական մանրանկարչութիւնը եւ մանրանկարիչներ հայ տպագրութեան մէջ, Վենետիկ, 1939:

[5] **Ա. Սիմոնյան**, Քրիստոսի ծննդյան պատկերագրությունը Թովմա Վանանդեցու հրատարակությունների փորագրանկարներում, «Էջմիածին», 2015, Ջ., էջ 94-95:

ժումը սկիզբ առավ Լեհաստանից եւ անցավ Կ. Պոլիս, ապա՝ Սպահան: Այս շարժման կարեւորագույն ներկայացուցիչն էր գրիչ-մանրանկարիչ Ղազար Բաբերդացին[6]: Շարժումը նույնիսկ տարածվեց հայ եկեղեցիների որմնանկարչության վրա, որի լավագույն օրինակը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի եկեղեցու որմնանկարներն են: Ոսկանյան Աստվածաշնչից կարելի է առանձնացնել մոտ մեկ տասնյակ թեմատիկ փորագրապատկերներ, որոնք մեծ տարածում են գտել Կ. Պոլսի եւ Սպահանի ձեռագիր Աստվածաշնչերի նկարազարդումներում:

ԺԷ. դարում Նոր Ջուղայում եւ Կ. Պոլսում նկարազարդված Աստվածաշնչերը պատկերազարդման տեսանկյունից բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը նկարազարդվում էր Ալբրեխտ Դյուրերի եւ նրա հետեւորդների, այդ թվում նաեւ Ոսկան Երեւանցու Աստվածաշնչի փայտափորագիր պատկերների, իսկ մյուսը՝ Թեոդոր դե Բրայի Աստվածաշնչի հիման վրա[7]: ՄՄ ձեռ. Հմր 201 (Սպահան, 1660 թ., գրիչ՝ Աստվածատուր, ծաղկող՝ Հայրապետ), Հմր 204 (Նոր Ջուղա, ԺԷ. դ., գրիչ՝ Գասպար երեց, Հարություն դպիր, Սարգիս Վանեցի, ծաղկող՝ Ստեփանոս), Հմր 349 (Կ. Պոլիս, 1686 թ., ծաղկող՝ Մաղաքիա Կ. Պոլսցի, Մարկոս պատկերահան) Աստվածաշնչերում զետեղված մի շարք մանրանկարներ իրենց պատկերագրությամբ ուղղակիորեն կրկնում են Ոսկանյան Աստվածաշնչի նույնանուն փորագրապատկերները, հատկապես Հովհաննու Հայտնության նկարազարդումները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայտնութենության նկարազարդումների համար նախատիպ են ծառայել միայն եվրոպական նախօրինակները, քանի որ հայ գրքարվեստում մինչ ԺԷ. դարը այդ թեմայով պատկերներ գրեթե չկան:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում պահվող՝ 1645 թ. Սպահանում գրված եւ նկարազարդված Աստվածաշնչի (ձեռ. Հմր 1933, գրիչ՝ Աստվածատուր դպիր, ծաղկող՝ Հայրապետ) պատկերազարդումը սկսվում է Արարչագործության տեսարանից եւ ավարտվում Նոր Երուսաղեմը պատկերող մանրանկարով: Ոչ միայն այս, այլ նաեւ ԺԷ. դարի մյուս Աստվածաշնչերում (ՄՄ Հմր ձեռ. 201, 204, 349) Նոր Երուսաղեմ պատկերող

---

[6] Ղազար վրդ. Բաբերդացին Լվովի Հաճկատար Աստվածածին վանքում Թորոս գրչին պատվիրել է արտագրել Աստվածաշունչ, որը մասամբ նկարազարդել է ինքը (ՄՄ ձեռ. Հմր 351, Լվով 1616-1619 թթ., գրիչ՝ Թորոս դպիր, ծաղկող՝ Ղազար վրդ. Բաբերդացի):

[7] 1496-1498 թթ. Հյուսիսային Վերածնունդի նկարիչ, ծագումով գերմանացի Ալբրեխտ Դյուրերը ստեղծել է իր հայտնի՝ «Ապոկալիպսիս» (Հայտնութենական) փայտափորագիր պատկերների շարքը: Այն բաղկացած է 15 պատկերներից, որոնք արտացոլում են Հովհաննես Աստվածաբանի տեսիլքները Պատմոս կղզում: Այս շարքը պատկերազարդման նախատիպ է հանդիսացել նկարիչների համար:

Նկ. 1. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց
յԱմստէրդամ, 1666

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նկ. 2. ՄՄ Հ^{մր} 349 Աստուածաշունչ

Նկ. 1ա. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց
յԱմստէրդամ, 1666

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նկ. 2ա. ՄՄ Հ^{մր} 349 Աստուածաշունչ

մանրանկարը գրեթե նույնությամբ կրկնօրինակում է Ոսկանի Աստվածաշնչի նույնանուն փորագրապատկերը: Պատկերագրական այս տեսակը Քրիստոֆել վան Զիխեմի նորարարությունն էր՝ կիրառված 1646 թ. հրատարակված Աստվածաշնչում, քանի որ այս պատկերը չկա ո՛չ Դյուրերի, ո՛չ էլ եվրոպական այլ նկարիչների գործերում: Հարց է առաջանում. ինչպե՞ս է Աստվածատուրը 1645 թ.Նոր Ջուղայում կրկնօրինակել այս փորագրանկարը՝ մեկ տարի ավելի շուտ, քան այն տպագրվել է Ամստերդամում 1646 թ.: Միակ տարբերակն այն է, որ Քրիստոֆել վան Զիխեմը այս պատկերը փորագրել է նախքան 1646 թ. Աստվածաշունչն ավարտելը[8]*: Ավելի ընդունելի բացատրությունն, այնուամենայնիվ, այն է, որ Նոր Ջուղայի Աստվածաշնչի որոշակի նկարներ ավելացվել են 1646 թ. հետո: Առավել վաղ աստվածաշնչյան հրատարակություններում բացակայում է Հայտնութենության այս նկարագարդումը:*

Ստորեւ ներկայացնում ենք մի շարք փորագրապատկերներ, որոնք ընդհանրություններ ունեն վերը նշված Աստվածաշնչերում զետեղված մանրանկարների հետ:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ (նկ. 1, 1ա, 2, 2ա)
Մննդոց Ա. 1-25

Մննդոց գրքի սկզբում դրված են Արարչագործության վեց օրերը ներկայացնող վեց փորագրանկարներ[9]*: Առաջինն ու երկրորդը ներկայացված են գրեթե նույն պատկերագրությամբ. Հայր Աստված՝ երկնքում ճախրելիս: Երրորդ փորագրանկարում բուսականության ստեղծման տեսարանն է, իսկ չորրորդ փորագրանկարը պատկերված է աստվածաշնչյան՝ վերը նշված նկարագրության համաձայն. կենտրոնում Հայր Աստվածն է՝ ձեռքերը վեր պարզած: Վերին երկու անկյուններում լուսնի եւ արեւի պատկերներն են: Հինգերորդ փորագրանկարում արտացոլված է կենդանիների ստեղծման եւ անվանակոչման տեսարանը:*

ԵՎԱՅԻ ԱՐԱՐՈՒՄԸ (նկ. 1ա, 2ա)
Մննդոց Ա. 26-31

Վեցերորդ օրն Աստված արարեց Ադամին եւ Եվային: Եվան (առաջին Մայր) Կույս Մարիամի կամ եկեղեցու նախօրինակն է:

---

[8] **B. Narkiss, M. E. Stone**, Armenian Art Treasures of Jerusalem, Massada 1979, p. 119.

[9] **Վ. Դեւրիկյան**, Ոսկան վարդապետ Երեւանցի. կյանքը եւ տպագրական գործունեությունը, Երեւան 2015, էջ 87:

Վաղ Վերածնության դարաշրջանից առաջ Աստված պատկերվում էր որպես Սուրբ Երրորդության երկրորդ դեմք: Հայր Աստված հիմնականում ներկայացվում է Ադամին կյանք տալիս կամ ձեռքը պարզած՝ իբրեւ հպման միջոցով նրան կյանք տալու նշան: Այս թեման շատ հաճախ համատեղվում է Փորձության եւ Դրախտից վտարման տեսարանների հետ:

Փորագրանկարում զետեղված է Եվայի արարման տեսարանը: Ադամը պառկած է գետնին. Աստված նրան քնեցրել է, իսկ Եվան պատկերված է Ադամի մարմնից դուրս գալիս: Եվան կանգնած է Աստծո առաջ՝ հարգանք արտահայտող դիրքով:

Արարչագործության այս փորագրանկարը գրեթե նույնությամբ կրկնում է ՄՄ Հ^{մր} 349 ձեռ. Աստվածաշնչի արարչագործությունը՝ մի բացառությամբ. մանրանկարում Հայր Աստված պատկերված է իրեն բնորոշ եռանկյունի լուսապսակով, իսկ փորագրանկարում՝ շքեղ ճաճանչապսակով, որը բնորոշ էր արեւմտաեվրոպական արվեստին:

ՀԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ ԲԵԹԵԼՈՒՄ (նկ.3, 3ա)
Մննդոց ԻԸ. 10-22

«Յակոբը Երդման ջրհորի մօտից ելաւ գնաց Խառնան: Հասնելով մի տեղ՝ նա քնեց այնտեղ, որովհետեւ արեւն արդէն մայր էր մտել: Նա առաւ այնտեղի քարերից մէկը, դրեց գլխի տակ ու քնեց այնտեղ: Նա երազ տեսաւ. Երկրի վրայ հաստատուած էր մի սանդուղք, որի ծայրը հասնում էր երկինք, իսկ Աստծու հրեշտակները դրանով ելնում, իջնում էին: Տէրը կանգնած էր սանդուղքի վրայ: Նա ասաց. «Ես տէրն եմ, քո հայրը, Աբրահամի Աստուածը եւ Իսահակի Աստուածը: Մի՛ վախեցիր, որովհետեւ այն հողը, որի վրայ քնել ես դու, քեզ եմ տալու եւ քո սերունդներին: Քո սերունդները երկրի աւազի չափ շատ են լինելու, տարածուելու են դէպի ծովակողմ, դէպի արեւելք, դէպի հիւսիս ու հարաւ: Քո շնորհիւ եւ քո սերունդների շնորհիւ օրհնուելու են աշխարհի բոլոր ազգերը...»:

Փորագրանկարը պատկերված է ըստ Մննդոց գրքի այս նկարագրության: Քաղաքային համայնապատկերին Հակոբն է՝ պառկած քարին, նրա ետեւում՝ տասներկու աստիճաններից բաղկացած սանդուղք է, որի վրա բարձրանում են հրեշտակները: Աստիճանի վերեւում՝ երկնակամարի կենտրոնում, Հայր Աստվածն է՝ շրջապատված քերովբեներով եւ սերովբեներով: Գրեթե նույնանման պատկերագրություն ունի ՄՄ Հ^{մր} 204

ՅԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ ԲԵԹԷԼՈՒՄ

Նկ. 3. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 3ա. ՄՄ Հմր 204 Աստուածաշունչ

ԱՀԱՐՈՆԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻ ՕԾՈՒՄԸ ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Նկ. 4. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 5. ՄՄ Հմր 349 Աստուածաշունչ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ

Նկ. 6. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 6ա. ՄՄ Հմր 201 Աստուածաշունչ

ձեռ. Աստվածաշնչի նույնանուն մանրանկարը: Տարբերությունն այն է, որ փորագրանկարի հենքը ճարտարապետական կառույց է, իսկ մանրանկարում այն բացակայում է:

ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ (նկ. 4, 5)
Ղեւտական Ա. 1-17

«Տէրը կանչեց Մովսէսին, խօսեց նրա հետ վկայութեան խորանից՝ ասելով. «Խօսի՛ր իսրայէլացիների հետ եւ ասա՛ նրանց. «Եթէ ձեզնից որեւէ մէկը անասուններից զոհ է մատուցելու, ապա խոշոր կամ մանր եղջերաւոր անասուն թող մատուցի: Եթէ նա արու արջառ է մատուցելու որպէս ողջակէզ, ապա այն թող լինի ոչ արատաւոր: Վկայութեան խորանի դռան մօտ թող բերի այն, որպէսզի Տիրոջ համար ընդունելի լինի որպէս քաւութիւն նրան: Նա իր ձեռքը թող դնի զոհուող անասունի գլխին, որպէսզի այն Տիրոջ համար ընդունելի լինի, իսկ իր անձի համար՝ քաւութիւն: Զուարակը թող մորթեն Տիրոջ առաջ: Քահանաները՝ Ահարոնի որդիները, արիւնը թող բերեն ու շաղ տան վկայութեան խորանի դռան մօտ գտնուող զոհասեղանի շուրջը: Ողջակիզուելիք անասունը մորթազերծ անելուց յետոյ թող բաժանեն մասերի: Քահանաները՝ Ահարոնի որդիները, զոհասեղանի վրայ կրակ թող վառեն եւ փայտ դիզեն կրակի վրայ...»:

Փորագրանկարում ներկայացված է ողջակիզման արարողությունը: Կենտրոնում զոհասեղանն է, որտեղ կրակի մէջ այրվում են արջառները: Զոհասեղանի շուրջ պատկերված են Ահարոնի որդիները՝ քահանաները, որոնք կիսամերկ, ձեռքերը վեր պարզած լսում են Աստծո խոսքը:

ԱՀԱՐՈՆԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻ ՕՇՈՒՄԸ (նկ. 4, 5)
Ղեւտական Ը. 1-13

«Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Ա՛ռ Ահարոնին ու նրա որդիներին, նրանց զգեստներն ու օծութեան իւղը, մեղքերի քաւութեան համար զոհաբերուելիք զուարակը, երկու խոյերն ու բաղարջների սկուտեղը եւ ամբողջ ժողովրդին հաւաքի՛ր վկայութեան խորանի դռան մօտ»: Մովսէսն արեց այնպէս, ինչպէս Տէրը հրամայել էր իրեն. նա հաւաքեց ժողովրդին վկայութեան խորանի դռան մօտ:

Մովսէսն ասաց ժողովրդին. «Այս բանն է կարգադրել Տէրը»: Մովսէսն Ահարոնին ու նրա որդիներին տարաւ եւ ջրով լողացրեց նրանց: Նա Ահարոնին հագցրեց պատմուճանը, գօտի կապեց նրա մէջքին, դրա վրայ հագցրեց թիկնոցը, յետոյ դրա վրայ դրեց վակասը, վակասի ժապաւէնով զգեստներն ամրացրեց միմեանց: Դրա վրայ կապեց լանջապանակը, վերջինիս վրայ դրեց Յանդիմանութիւնն ու Ճշմարտութիւնը: Նրա գլխին դրեց խոյրը, խոյրի վրայ, երեսի կողմից՝ նուիրագործուած եւ մաքուր ոսկէ թիթեղը, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին»:

Ճարտարապետական շինության հենքին պատկերված են Մովսեսն ու Ահարոնը: Ահարոնը լուսապսակով է, սաղավարտով եւ այն զգեստներով, որոնք հագցրել էր Մովսեսը[10]: Ահարոնի կողքին կանգնած է Մովսեսը՝ ալեհեր, մորուսով: ՄՄ ձեռ. Հ՝ 349 Աստվածաշնչի մանրանկարը տարբերվում է փորագրանկարից միայն նրանով, որ այստեղ բացակայում են ճարտարապետական կառույցները:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ (նկ.6, 6ա)
Յայտնութիւն Յովհաննու Դ. 1-5

«Եւ սրանից յետոյ տեսայ, որ ահա երկնքի դռները բացուած էին. եւ առաջին փողի ձայնը, որ լսեցի, խօսում էր ինձ հետ ու ասում. «Ելի՛ր այստեղ, եւ քեզ ցոյց պիտի տամ, ինչ որ ապագայում լինելու է»: Եւ իսկոյն Հոգին բռնեց ինձ: Եւ ահա տեսայ մի աթոռ այնտեղ՝ երկնքում: Եւ աթոռի վրայ նստել էր մէկը՝յասպիս եւ սարդիոն քարերի տեսքով. եւ քահանաներ աթոռի շուրջ՝զմրուխտի տեսքով. եւ այդ աթոռի շուրջ՝քսանչորս աթոռներ, իսկ աթոռների վրայ նստել էին քսանչորս երէցներ՝սպիտակ զգեստներ հագած եւ իրենց գլուխների վրայ՝ոսկէ պսակներ: Եւ այդ աթոռից ելնում էին փայլատակումներ, ձայներ եւ որոտներ. Եւ աթոռի առաջ կային բորբոքուած կրակի եօթը ջահեր, որ Աստծու եօթը Հոգիներն են...»:

Երկնակամարում՝փառապսակի մեջ, պատկերված է գահին բազմած Հայր Աստված՝շրջապատված քսանչորս Երեցներով, որոնցից ոմանք թագակիր են: Աստծո գահի շուրջ վառվում են յոթ ճրագակալներ, իսկ փառապսակից դուրս պատկերված է քառակերպը՝ցուլը, առյուծը, հրեշտակը եւ արծիվը: Այս կենդանիները համարվում են հայտնութենական կենդա-

[10] **В. Д. Сарабьянов**, Аарон, иконография, Православная Энциклопедия, том 1, Москва, 2003, с. 18-19.

ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՍՄԱՆ ԵՕԹ ՍԿԱՀԱՌԱԿՆԵՐԸ

Նկ. 7. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 7ա. ՄՄ Հմր 204 Աստուածաշունչ

ՍՊԻՏԱԿ ՁԻԱՒՈՐ

Նկ. 8. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց
յԱմստէրդամ, 1666

Նկ. 8ա. ՄՄ Հմր 204 Աստուածաշունչ

նիներ: Ի տարբերություն ՄՄ ձեռ. Հմր 201 Աստվածաշնչում զետեղված մանրանկարի՝ փորագրանկարը ավելի հագեցած է կերպարներով. կարծես փորագրիչը տարածության յուրաքանչյուր հատված օգտագործել է: Մանրանկարում յուրաքանչյուր երեց պատկերված է թագակիր, տավիղ նվագելիս:

ԱՍՏԾՈ ՑԱՍՄԱՆ ՅՈԹ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐԸ (նկ. 7, 7ա)
Յայտնութիւն Յովհաննու ԺԶ. 1-21

«Եւ տաճարից լսեցի մի բարձր ձայն, որ ասում էր եօթը հրեշտակներին. «Գնացէ՛ք, Աստծու ցասման եօթը սկաւառակները թափեցէ՛ք երկրի վրայ…»:

Պատկերված են յոթ հրեշտակներ, յուրաքանչյուրի ձեռքում՝ մեկական սկավառակ: Գազանի բերանից դուրս են գալիս երեք թագավորների կերպարները: Առաջին հրեշտակի սկավառակի պարունակությունը թափվում է երկրի վրա, երկրորդինը՝ ծովի, երրորդինը՝ գետերի ու աղբյուրների ջրերի մեջ, չորրորդինը՝ արեւի վրա, իսկ հինգերորդ հրեշտակի սկավառակի պարունակությունը թափվում է գազանի վրա:

ՍՊԻՏԱԿ ՁԻԱՎՈՐԸ (նկ. 8, 8ա)
Յայտնութիւն Յովհաննու ԺԹ. 7-15

«Ապա տեսայ երկինքը բացուած. եւ ահա մի սպիտակ ձի. ով հեծել էր նրա վրայ, կոչւում է Հաւատարիմ եւ Ճշմարիտ. նա արդարութեամբ է դատում ու պատերազմում: Նրա աչքերը նման էին կրակի բոցի, եւ նրա գլխի վրայ կային բազում պսակներ: Նա ունէր գրուած մի անուն, որը ոչ ոք չգիտէ, այլ միայն՝ ինքը: Եւ իր վրայ գցել էր արիւնով ներկուած մի զգեստ. Նրա անունն էր՝ Բանն Աստծու: Եւ երկնքի զօրավարներ ու երկնքի զօրքեր ձիերով գնում էին նրա յետեւից՝ հագած մաքուր եւ սպիտակ բեհեզներ»:

Երկնակամարի կենտրոնում պատկերված է հրեշտակ՝ ձեռքերը բացված: Հրեշտակից ներքեւ Հավատարիմ եւ Ճշմարիտ կոչվող հեծյալի կերպարն է, որի հետեւից գնում են երկնքի զորավարները եւ զորքերը՝ հագած սպիտակ բեհեզներ: Հեծյալի բերանից դուրս է գալիս սուր, որով նա պետք է հարվածեր ազգերի ներկայացուցիչներին: Հեծյալի դիմաց պատկերված են երկրի թագավորները եւ զորքերը: Ներքեւում՝ բոցկլտացող կրակե բոցերում, այրվում է հինգ գլխանի գազանը:

ՅՈՎՀԱՆՆԵՍԸ ԿՈՒԼ Է ՏԱԼԻՍ ԳԻՐՔԸ (նկ. 9, 9ա)
Յայտնութիւն Յովհաննու Ժ. 1-9

«Տեսայ նաեւ մի այլ զօրաւոր հրեշտակ, որ իջնում էր երկնքից՝ ամպի մէջ փաթաթուած եւ իր գլխին՝ ծիածան. եւ նրա երեսը նման էր արեգակի, իսկ նրա ոտքերը՝ հրեղէն սիւների: Եւ նա իր ձեռքում ունէր մի բացուած գրքոյկ. նա իր աջ ոտքը դրեց ծովի վրայ, իսկ ձախը՝ ցամաքի վրայ: Եւ աղաղակեց բարձր ձայնով, ինչպէս մռնչում է առիւծը. եւ երբ աղաղակեց, եօթը որոտները թնդացին իրենց ձայներով. եւ երբ եօթը որոտները թնդացին, ուզում էի գրել. բայց երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ծածկի՛ր, ինչ որ խօսեցին եօթը որոտները եւ մի՛ գրիր»: Եւ այն հրեշտակը, որին տեսել էի եւ որն իր ոտքը դրել էր ծովի վրայ, իսկ միւս ոտքը՝ ցամաքի վրայ, իր աջ ձեռքը բարձրացրեց երկինք. նա երդուեց Նրանով, որ յաւիտեան կենդանի է, որ ստեղծեց երկիրը եւ ինչ որ կայ նրա մէջ, թէ այլեւս չկայ ժամանակ. այլ այն օրը, երբ եօթներորդ հրեշտակը իր փողը հնչեցնի, պիտի կատարուի Աստծու խորհուրդը, որ աւետարանուեց իր ծառաների՝ մարգարէների միջոցով: Եւ այն ձայնը, որ լսել էի երկնքից, դարձեալ խօսեց ինձ հետ եւ ասաց. «Գնա՛, ա՛ռ այն գրքոյկը, որը, բացուած, իր ձեռքում ունի հրեշտակը եւ կանգնած է ծովի ու ցամաքի վրայ»: Եւ ես, գնալով հրեշտակի մօտ, նրանից խնդրեցի գրքոյկը. եւ նա ինձ ասաց. «Ա՛ռ սա եւ կե՛ր, եւ քո որովայնում դառն պիտի դառնայ այն, իսկ քո բերանում՝ քաղցր ինչպէս մեղը...»:

Հանկարծ Հովհաննեսի առջեւ երեւում է «ամպ հագած մի հրեշտակ՝ արեւի նման գլխով եւ կրակե սյուների նմանվող ոտքերով»: Տալով Հովհաննեսին նոր, դեռ չկատարված աղետների մասին գրված գիրքը՝ նա հրամայում է կուլ տալ այն: Գործողությունը պատկերված է ծովի մոտ. աջ կողմում կղզին է, որից այն կողմ անծայրածիր ծովն է՝ լողացող նաւերով, կարապով եւ դելֆինով: Ափին պատկերված են ծառեր եւ թփեր, որտեղ առաջին հատվածում՝ հենց ջրի մոտ, նստած է Հովհաննեսը՝ գիրքը կուլ տալիս: Նրա կողքին թափված են գրենական պիտույքներ եւ բացված գիրք: Այս իրական հենքի վրա կտրուկ առանձնանում է արեւի նման գլխով եւ կրակի սյուների նման ոտքերով հրեշտակի կերպարը, որը, համաձայն բնագրի, մի ձեռքով ցույց է տալիս երկինքը, որտեղ Աստծո տաճարն է, եւ Հովհաննեսին է մեկնում գիրքը:

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ ԿՈՒԼ Է ՏԱԼԻՍ ԳԻՐՔԸ

Նկ. 9. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 9ա. ՄՄ Հմր 204 Աստուածաշունչ

ՆՈՐ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Նկ. 10. Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարանաց յԱմստէրդամ, 1666

Նկ. 10ա. ՄՄ Հմր 201 Աստուածաշունչ

ՆՈՐ՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ (նկ. 10, 10ա)
Յայտնութիւն Յովհաննու ԻԱ. 9-27

«Եւ ինձ մօտ եկաւ մէկն այն եօթը հրեշտակներից, որոնք ունէին եօթը սկաւառակներ՝լցուած եօթը վերջին պատուհասներով. եւ նա խօսեց ինձ հետ ու ասաց. «Ե՛կ, քեզ պիտի ցոյց տամ հարսին՝Գառան կնոջը»: Եւ առաւ տարաւ ինձ, Հոգով, դէպի մի բարձր ու մեծ լեռ եւ ցոյց տուեց ինձ մեծ եւ սուրբ քաղաքը՝Երուսաղէմը, որը իջել էր երկնքից, Աստծու մօտից...»:

Փորագրապատկերի կենտրոնում պատկերված է Երկնային Երուսաղեմը՝ տասներկու դռներով: Այդ տասներկու դռների կամարների կենտրոնում տասներկու հրեշտակներ են: Երկնակամարում՝ փառապսակի մեջ, Հայր Աստծո պատկերն է՝շրջապատված յոթ հրեշտակներով, ներքեւում Սուրբը Հոգին է՝աղավնու տեսքով: Տեսարանի աջ անկյունում հրեշտակն է, որը ձեռքում պահում է ոսկե եղեգ: Հրեշտակի կողքին պատկերված է Յովհաննեսը՝ երիտասարդ, գանգրահեր, եղեգը ձեռքին:

Ամփոփելով շարադրանքը՝ պետք է փաստենք, որ Աստվածաշնչի պատկերազարդման մեջ օգտագործված թեմատիկ փորագրապատկերներն ունեն արեւմտյան պատկերագրություն, ինչը պայմանավորված է Աստվածաշնչի՝ եվրոպական միջավայրում հրատարակած լինելու եւ եվրոպական փորագրող-նկարչի՝ Քրիստոֆել վան Զիխեմի տպատախտակները (կլիշեները) օգտագործելու հանգամանքով: Փորագրանկարները աչքի են ընկնում կանոնավոր պատկերագրության մեջ հեղինակի կողմից ներմուծված կերպարներով կամ այլ մանրամասնություններով, որոնք բացակայում են մանրանկարներում: Փորագրապատկերները հիմնականում ներկայացնում են բազմակերպար հորինվածքներ, որոնցում հեղինակը դրսեւորում է տարածության, հեռանկարի կառուցման մեծ վարպետություն: Ոսկանյան տպարանը առաջինն էր, որ ներգրավվեց եվրոպական գրահրատարակչական գործընթացի մեջ՝ կապող օղակ հանդիսանալով արեւմտաեվրոպական մշակույթի եւ հայ տպագիր գրքարվեստի միջեւ: Ոսկան Երեւանցու Աստվածաշունչը հայ ուշ միջնադարյան գրքարվեստի բացառիկ հուշարձանն է: Ոսկանյան Աստվածաշունչն իր ազդեցությունը ունեցավ ոչ միայն հայ տպագիր գրքերի, այլ նաեւ ձեռագիր աստվածաշնչերի նկարազարդումների վրա:

РЕЗЮМЕ

Среди армянских типографий Западной Европы XVII-XVIII веков наиболее примечательна типография в Амстердаме. Основанная в 1660 г., она после нескольких лет перерыва возобновила свою работу и продолжала свою деятельность до 1716 г., таким образом проработав целых 57 лет. В 1662 г. Воскан Ереванци по поручению Акопа Джугаеци отправляется в Европу для издания Библии на армянском языке. Осенью 1664 г. он берется за руководство типографией св. Эчмиадзина и св. Саргиса в Амстердаме и вместе с учениками Карапетом Адрианаци и Оганом Ереванци начинает печатать Библию, издание которой заканчивается в 1668 г. Все издания Воскана Ереванци отличаются высоким качеством и изысканным оформлением.

SUMMARY

In the 17th-18th centuries, one of the most remarkable Armenian publishing houses in Western Europe was the one located in Amsterdam, Netherlands, where the publishing of the Armenian books began in 1660, then stopped temporarily and soon continued until 1716, for almost 57 years and then stopped definitely. In 1662, on recommendation of Hakob of Julfa, Voskan of Yerevan went to Europe in order to publish the Bible in Armenian. In 1664 Voskan of Yerevan took charge of the publishing house of Holy Etchmiadzin and St. Sarkis, and together with his students Karapet of Adrian and Ohan of Yerevan began and in 1668 finished the publication of the Bible. The publications of Voskan of Yerevan are distinguished with their gorgeous illustrations.